ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

24 Հոկտեմբերի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ավագանու նստավայր

գ. Փամբակ

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Գրիգոր Կարապետյանը, Արշակ Սրապյանը, Շուշանիկ Հակոբյանը, Էմմա Գասպարյանը, Արայիկ Քոչարյանը, Սերյոժա Սարդարյանը և Ալվարդ Ավետիքյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Նաիրա Հարությունյանը և Սերյոժա Եսայանը:

Նիստից բացակայում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Աշոտ Անտինյանը և Պավլիկ Պապինյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Սևակ Խաչատրյանը:

Նիստին նեկա էին աշխատակազմի պատասխանատուներ:

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 12 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14.00-ին նիստը հայտարարեց բացված: Նա ողջունեց ներկաներին և **առաջարկեց հաստատել օրակարգը:**

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 114-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի հոկտեմբերի 24-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

3. Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի տարածքում փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման աշխատանքներին համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

4. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

5. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գինը և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Արսեն Լենդրուշի Մարտիրոսյանին, Աննա Լենդրուշի Մարտիրոսյանին, Վարդիշաղ Իշխանի Մարտիրոսյանին, Լենդրուշ Պողոսի Մարտիրոսյանին և Էմիլիա Լենդրուշի Կոծինյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2025 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում համայնքի բյուջեով ձեռք է բերվել ընդհանուր 1.294.000 ՀՀ դրամի հիմնական միջոց: Նախագծին կից ներկայացված ցանկում ավելացվել են 945.000 ՀՀ դրամ արժողությամբ 3 շչակներ, որոնք նախնական համաձայնություններ ստանալուց հետո նախատեսվում են տեղադրել Մարգահովիտ, Արջուտ և Վահագնի բնակավայրերում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 115-Ա/:

2. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի տարածքում փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման աշխատանքներին համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով «ԷՎԵԼ ՊԻՍ» ՍՊԸ-ի գրությունը, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 15.10.2025թ-ին անցկացված հանրային լսումների արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը և տեսաձայնագրությունը, առաջարկում է տալ նախնական համաձայնություն /կամ անհամաձայնություն/ «ԷՎԵԼ ՊԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի վարչական տարածքում փոքր հիդրոէլեկտրակայանի (ՓՀԷԿ) կառուցման և շահագործման աշխատանքները շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման նախատեսվող գործունեությանը: Նա նշեց, որ դեռևս 21.04.2023թ-ին, ինչպես նաև 17.12.2024թ-ին «ԷՎԵԼ ՊԻՍ» ՍՊԸ-ի նախաձեռնությամբ Փամբակ համայնքում անց է կացվել 2 հանրային լսում՝ Վահագնաձոր բնակավայրի տարածքում փոքր հիդրոէլեկտրակայանի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ: Լսումներն անցել են կառուցողական մթնոլորտում և բնակիչների կողմից տրվել է համաձայնություն:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ շրջակա միջավայրի բաղադրիչների (օդ, հողային, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա հնարավոր բացասական ազդեցության մեղման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են շինարարության և շահագործման փուլերում առաջացող թափոնատեսակների, կենցաղային աղբի կառավարմանը, առաջացող աղմուկի և թրթռումների մակարդակի նվազեցմանը, կենսաբազմազանության պահպանությանը և այլն:

Սակայն փորձաքննության գործընթացում պարզվել է, որ առկա է անհամապատասխանություն՝ N 254 ջրօգտագործման թույլտվությամբ ամրագրված ջրառի և ՓՀԷԿ-ի կառուցման հայտում ներկայացված ջրառի նիշի միջև, մասնավորապես՝ ջրառի նիշը ՋԹ նախատեսված է 1070մ, իսկ ՇՄԱԳ-ում 1065մ:

Այդ անհամապատասխանության պատճառով հայտը լիազոր մարմնի կողմից մերժվել է և առաջարկվել է գործընթացը սկսել նորից՝ առաջին հանրային լսմամբ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման աշխատանքներին համաձայնություն տրամադրելու հարցի նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 116-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - . ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենսդրությունը, առաջարկում է հաստատել Փամբակ համայնքում 2026թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթացը:

Գործընթացն իրականացնելու նպատակով Փամբակ համայնքի 2026թ-ի բյուջեից հատկացնել գումար՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված Փամբակ համայնքին հատկացվելիք գումարի առնվազն 20%-ի չափով:
Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 35.000.000 ՀՀ դրամ:
Զեկուցողը նշեց, որ 2024թ-ին Փամբակ համայնքը կամավորության հիմունքներով մասնակցել է Հայաստանում առաջին անգամ գործարկվող Մասնակցային բյուջետավորման գործընթացին, որի արդյունքում ձեռք է բերվել գյուղ գործիքներ:
Կամավոր մասնակցության արդյունքում համայնքը ընդգրկվել է 2025թ-ին արդեն իսկ պետական աջակցությամբ մասնակցային բյուջետավորման սուբվենցիոն ծրագրեր իրականացնող 21 համայնքների շարքում: Պետության կողմից հատկացվող մասնաբաժինը կազմել է 32418600 ՀՀ դրամ, Փամբակ համայնքի կողմից ներդրման չափը մոտ 7.000.000 ՀՀ դրամ: Արդյունքում իրականացվել և իրականացման փուլում են բնակիչների կողմից առաջարկված և քվեարկության փուլը հաղթահարած 2 ծրագրեր.
1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ներհամայնքային ճանապարհի նորոգում, համայնքի ենթակառուցվածքների բարելավում, սեփական ռեսուրսների հզորացում՝ էքսկավատոր /բազմաֆունկցիոնալ տրակտորի ձեռքբերմամբ ծրագիրը, որի արդյունքում նորոգվել է Լեռնապատ-Լեռնաջուր ճանապարհի 1 կմ հատվածը և ձեռք է բերվել JCB մակնիշի բազմաֆունկցիոնալ տրակտոր: Ծրագրն ամբողջությամբ ավարտված է, ընդհանուր արժեքը կազմել է 34.995.000 ՀՀ դրամ /որից՝ 3.711.000 դրամը՝ ճանապարհի նորոգում, 31.284.000 դրամը տրակտորի ձեռք բերում/:

2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրի այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության խաղահրապարակի բարեկարգում, հատակի կահավորում ռետինե ծածկով ծրագրը, այն իրականացման փուլում է, կատարվել է 80-85%-ով, բյուջեն կազմում է 4.043.000 ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 117-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գինը և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց, տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 3 լոտ հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելուն:

Վարձակալության իրավունքով, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետներով տրամադրվում են հողամաս.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0336-0068 ծածկագրով 1,63193 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0394-0015 ծածկագրով 2.33593 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-070-0212-0576 ծածկագրով 0,432149 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 118-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Արսեն Լենդրուշի Մարտիրոսյանին, Աննա Լենդրուշի Մարտիրոսյանին, Վարդիշաղ Իշխանի Մարտիրոսյանին, Լենդրուշ Պողոսի Մարտիրոսյանին և Էմիլիա Լենդրուշի Կոծինյանին օտարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց, հաշվի առնելով բնակիչների կողմից ներկայացված դիմումը, տալ համաձայնություն Արսեն Լենդրուշի Մարտիրոսյանին, Աննա Լենդրուշի Մարտիրոսյանին, Վարդիշաղ Իշխանի Մարտիրոսյանին, Լենդրուշ Պողոսի Մարտիրոսյանին և Էմիլիա Լենդրուշի Կոծինյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնք գյուղ Մարգահովիտ 06-070-0335-0005 կադաստրային ծածկագրով 0,812078 հա հողամասին կից գտնվող 06-070-0333-0070 կադաստրային ծածկագրով 0,111742 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքը ուղղակի վաճառքով նրանց օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 135000 (մեկ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 119-Ա/:

Օրակարգի հարցերը սպառվեցին, նիստ վարողը հայտարարեց, որ նիստը համարվում է փակված:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ _____

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ _____

ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ _____

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՔՈՉԻՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Պ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 114-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025Թ-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի հոկտեմբերի 24-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի հոկտեմբերի 24-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:
3. Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի տարածքում փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման և շահագործման աշխատանքներին համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:
4. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու մասին:
5. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գինը և մրցույթի պայմանները հաստատելու մասին:
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման
նպատակով Արսեն Լենդրուշի Մարտիրոսյանին, Աննա Լենդրուշի Մարտիրոսյանին, Վարդիշաղ Իշխանի Մարտիրոսյանին, Լենդրուշ Պողոսի Մարտիրոսյանին
և Էմիլիա Լենդրուշի Կոծինյանին օտարելու մասին:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ Ղ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 115-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված
Փամբակ համայնքի ավագանու
«24» Հոկտեմբերի 2025 թ-ի թիվ 115-Ա որոշման

2025 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում ձեռք բերված հիմնական միջոցների ցանկ

Հ/Հ	Հիմնական միջեցի անվանումը	Ձեռքբերման տարեթիվը	Առկայությունը		Գինը /դրամ/	Գումարը /դրամ/
			Փաստացի (քանակը)	հաշվապահական տվյալներով (քանակը)		
1	Գրասեղան դիմադիրով	2025թ.	1	1	204000	204000
2	պահարան	2025թ.	1	1	76000	76000
3	ճանապարհային նշաններ 1.2	2025թ.	1	1	11000	11000
4	ճանապարհային նշաններ 2.5	2025թ.	1	1	36000	36000
5	ճանապարհային նշաններ 3.24	2025թ.	1	1	22000	22000
6	Շչակ	2025թ.	3	3	315000	945000
	ԸՆԴԱՄԵՆԸ		8	8	664000	1294000

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ Կ. ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 116-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀԱԳՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետերով, «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով «ԷՎԵԼ ՊԻՍ» ՍՊԸ-ի գրությունը, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 15.10.2025թ-ին անցկացված հանրային լսումների արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը և տեսաձայնագրությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն «ԷՎԵԼ ՊԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի վարչական տարածքում փոքր հիդրոէլեկտրակայանի (ՓՀԷԿ) կառուցման և շահագործման աշխատանքները շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման նախատեսվող գործունեությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 117-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Փամբակ համայնքում սկսել 2026թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:
2. 2026թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով Փամբակ համայնքի 2026թ-ի բյուջեից հատկացնել ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված Փամբակ համայնքին հատկացվելիք գումարի առնվազն 20%-ը:
3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 35.000.000 ՀՀ դրամ:
4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների ՀՀ կառավարության 1890-Ն որոշմամբ սահմանված տոկոսի չափով կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:
6. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար առաջնահերթություն չի սահմանվում՝ առաջարկը պետք է միտված լինի համայնքի սոցիալ տնտեսական զարգացմանը:
7. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2026-2028թթ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:
2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն:
3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 118-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ. ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001 թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասեր վարձակալության իրավունքով տրամադրելուն:

2. Վարձակալության իրավունքով, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետներով տրամադրվում են հողամաս.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0336-0068 ծածկագրով 1,63193 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ:

2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0394-0015 ծածկագրով 2.33593 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-070-0212-0576 ծածկագրով 0,432149 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Վարձակալության լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
ՍԱՐԳԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 119-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՍԵՆ ԼԵՆԴՐՈՒՇԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ, ԱՆՆԱ ԼԵՆԴՐՈՒՇԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ, ՎԱՐԴԻՇԱՂ ԻՇԽԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ, ԼԵՆԴՐՈՒՇ ՊՈՂՈՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԷՄԻԼԻԱ ԼԵՆԴՐՈՒՇԻ ԿՈԾԻՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Արսեն Լենդրուշի Մարտիրոսյանի, Աննա Լենդրուշի Մարտիրոսյանի, Վարդիշաղ Իշխանի Մարտիրոսյանի, Լենդրուշ Պողոսի Մարտիրոսյանի և Էմիլիա Լենդրուշի Կոծինյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Արսեն Լենդրուշի Մարտիրոսյանին, Աննա Լենդրուշի Մարտիրոսյանին, Վարդիշաղ Իշխանի Մարտիրոսյանին, Լենդրուշ Պողոսի Մարտիրոսյանին և Էմիլիա Լենդրուշի Կոծինյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնք գյուղ Մարգահովիտ 06-070-0335-0005 կադաստրային ծածկագրով 0,812078 հա հողամասին կից գտնվող 06-070-0333-0070 կադաստրային ծածկագրով 0,111742 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասն ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով Արսեն Լենդրուշի Մարտիրոսյանին, Աննա Լենդրուշի Մարտիրոսյանին, Վարդիշաղ Իշխանի Մարտիրոսյանին, Լենդրուշ Պողոսի Մարտիրոսյանին և Էմիլիա Լենդրուշի Կոծինյանին օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 135000 (մեկ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
ԱՎԵՏԻՔՅԱՆ ԱԼՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**